ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը ստորև ներկայացնում է իր կարիքների համար «*Համակարգերի և օգտագործողի ծրագրերի մշակման (Սոցիալական դեպքի վարման տեղեկատվական համակարգի արդիականացման ծառայություն)*» ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-18/5» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի հունվարի 29-ին կնքված N «ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-18/5» պայմանագրում 2018 թվականի հունիսի 29-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1-*Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը:*

Փոփոխության նկարագրություն-*Ծառայության մատուցման ժամկետը երկարաձգվել է 30 օրացուցային օրով:*

Փոփոխության հիմնավորում-*29.01.2018թ. կնքված N ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-18/5 ծածկագրով պայմանագրի 7.5 և 7.6 կետեր, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետի 4-րդ ենթակետ:*

Պատվիրատու՝ ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

2018թ. հունվարի 29-ին կնքված N ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-18/5 ծածկագրով պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի

ք. Երևան **« 29 » « հունիսի» 2018թ.**

«Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը, ի դեմս հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Աբրահամյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՆԱՏԿ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կարեն Ներսիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից (այսուհետև Կողմեր), հիմք ընդունելով 29.01.2018թ. կնքված N ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-18/5 ծածկագրով պայմանագրի (այսուհետև Պայմանագիր) 7.5 և 7.6 կետերը, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետի 4-րդ ենթակետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1.Համաձայնագրի առարկան

1.1 Ծառայության մատուցման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը:

1.2 Պայմանագրի գործողության ժամկետ է սահմանվում մինչև 2018 թվականի օգոստոսի 1-ը ներառյալ:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Ծառայությունների մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ մնում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը (ներառյալ հավելվածը) կազմված է երկու (2) էջից, կնքվում է հայերենով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ	«ՆԱՏԿ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, փ. Կ.Ուլնեցի 68	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի պ. 25/2, բն 20
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Զեյթուն մ/ճ	Բանկ՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ\Հ 163518012543	Հ\Հ 1930054634380100
ՀՎՀՀ 02602449	ՀՎՀՀ 00142638
Գործադիր տնօրեն	Տնօրեն
---------- Ա.Աբրահամյան	---------- Կ.Ներսիսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.